

Խմբագրական

ՓԱՐԲ

ԳԱՂԱՓԱՐԻ ՔՍԱՆ ՈՒՆՏԱՒՈՐՆԵՐՈՒՆ

Անոնք՝ քսան հնչակեաններ, 15 Յունիս 1915-ին, յամրաքայլ ու խորհրդաւոր դէմքերով կ'ուղղուէին դէպի մահազուշակ ծողափայտեր՝ իրենց սիրտերուն մէջ հպարտութեան ու վրէժի խառն զգացումներով:

Անոնք՝ քսան ուխտաւորներ, Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ պիտի անմահանային՝ սերունդներուն համար ըլլալու մշտական փարոսներ:

Անոնք՝ զաղափարի քսան անկուռ երգուեալներ, իրենց պատգամներով պիտի ըլլային դաստիարակները անհամար յետնորդներու: Այո, անոնք անշնչանալով պիտի կոթողուէին յանուն վաղուան արշալոյսին եւ ի սպաս ազգին ու հայրենիքին:



Փարամազ եւ իր խռովայոյզ ու հասակագեղ ընկերներ, կառափնարաններու բարձունքէն կ'աղաղակէին իրենց ժողովուրդին վաղուան այգաբացի մասին՝ որ պիտի ցաթէր արեւելքի հորիզոնին: Հայասպանութեան գորշ ու մռայլագոյն ամիսներն էին՝ երբ զաղափարի ուխտաւորները, առանց ընկճուելու, իրենց հրաքորբ արիւնը միախառնեցին ազատութեան նուիրական պայքարին: Քսան անհատական երագներ կը դարդէին բաբախել, բայց հաւաքական տեսլական մը կը ստանար նոր թափ ու եռանդ: Այն տեսլականը, որ ի սկզբանէ եղաւ Հնչակեան կուսակցութեան գոյառման միտք բանին, նպատակն ու հաւատոյ հանգանակը: Այդ շքեղ տեսլականը ունեցաւ բազում-բազում մարտիկներու եւ գործիչներու անձնդիր գուպարով, անհաշուելի նահատակներու հերոսական սխրանքներով: Տարբեր ճակատներու վրայ ինկան անոնք. անհաւասար կռիւ՝ չփախան եւ ոչ ալ անհաշտ ոսոխին դիմաց խոնարհեցան: Իրենց կեանքը ազուցելով կուսակցութեան հաւաքական պայքարի յորձանուսին, կոհակ-կոհակ ծաւալեցաւ՝ ուր որ անկ է, ինչպէս որ անկ է: Ազատութեան պայքարի գոհասեղանը կը կանչէր անոնց՝ որոնք գիտէին նուիրաբերել ամէն ինչ՝ ի խնդիր նպատակի: Եւ այդ կանչը հազաւորեց՝ ոտքի հանելով խիզախներու անթիւ փաղանգներ եւ քաջագուններու բազմաթիւ վաշտեր:

Օսմանեան իշխանութեանց որդեգրած հայաջինջ քաղաքականութիւնը, Կարմիր Սուլթանին տապալուէն ետք իսկ, արդէն ակնյայտ էր: Թէպէտ խաբուսիկ եւ մեղրածորան կարգախօսներ կը շարտուէին մերթ ընդ մերթ, թէ «Եղբայրութեան» լոգունգները զինովցուցած էին շատերը եւ գառնուկի մորթերով պարտկուած գայլերու յատուկ կատարութիւնը կ'անգիտանային օրուան ջոջերէն կարկառունները, սակայն հնչակեաններուն համար սա հերթական որոգայթ էր, հայակու ճորտափայ ծուղակ մը, որ պիտի մոլեգնէր յարմար մէկ պահուն: Այդ թէժ պահուն ի՞նչ կար աւելի հրամայական, քան դիպուկ եւ ուժգին հակահարուած խորամանկ ոսոխին: Այդ գործը կրնար գալ միայն հնչակեաններէն եւ այդ պատճառով իթիհատականներուն գլխաւոր նպատակը եղաւ՝ չեղքացնել այդ մարտական ուժը, ազգային յեղափոխական ջիղ ունեցող տարրը, մայր երակը հայ յեղափոխական շարժման:

Հնչակեան կուսակցութիւնը էր որ իր է. համագումարով կը մշակէր հակահարուածին մանրամասնութիւնները, մարտավարական ոճն ու եղանակը: Փարամազի դէկավարած ցանցը պատրաստ էր պատմական յանձնառութեան եւ զգեստիչ հարուածին: Անոնք փորձ եւ ոգի ունէին յարմարագոյն խիզախունին: Վճիռն ալ տրուած էր արդէն:

Հոս, տխրահռչակ մատնութեան պարագան չէ հարցը, այլ իթիհատական պարագալուխներուն հետեւողական ջանքը՝ արմատախիլ ընելու գիրենք խափանող հիմնական ուղղութիւնը, քանզի ուրիշ տարրեր թեւաթափ էին արդէն եւ նոյնիսկ գործակից՝ զանազան անմեղունակ շղարշներով: Ահա թէ ինչու համարտարած հալածանքը հնչակեաններուն դէմ եղաւ անթաքոյց ու հեշտ, եւ որուն պիտի յաջորդէր համընդհանուր ցեղասպանութեան դիպարին ծրագիրը:

Պաղատարի ուխտաւորները ի յառաջագունէ գիտէին գալիք աղետը: Անոնց ահազանգը բախեցաւ խուլ ականջներու: Ազգային գիտակցութեան եւ մարտական ջիղի հրահրումին առընթեր, որպէս ընկերվարականներ, կը քողագերծէին ոսոխին շահագործող, թալանչի եւ ազգայնամուլ էութիւնը: Ցեղամուլ միաժամանակ թշնամին է իր իսկ ժողովուրդին խոնարի եւ ճնշեալ դասակարգին: Իթիհատի եաթաղանին զոհերը միայն ընդդիմացող հայերը չէղան, այլեւ անոնք՝ որոնք Օսմանեան կայսրութիւնը կ'ուզէին դուրս բերել ռազմամուլ

Շարունակութիւնը տեսնել էջ 2

ԻՐԱՆ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԿՐԱԿԻ ՏԱԿ

Անցնող քանի մը շաբաթներուն աստիճանաբար սրած լարուածութենէն եւ փոխադարձ սպառնալիքներէն ետք, իսրայէլեան բանակն ու հետախուզական ծառայութիւնները երէկ անմահադէպ եւ լայնածաւալ յարձակում գործեցին Իրանի գիծուիրական եւ հիւլէական բազմաթիւ կեդրոններու դէմ: Աւելի քան երկու հարիւր ռազմական օդանաւերու գործածութեամբ յարձակումի առաջին ալիքը սկսաւ Թեհրանի ժամով արեւածագի ժամը 3:30-ին, ուր նախ կործանուեցաւ Իրանի հակաօդային պաշտպանութեան համակարգը, ապա գիծուիրական եւ գիտական կեդրոններ թիրախ դարձան ծանր հրթիռներու՝ նախ մայրաքաղաք Թեհրանի, ապա զանազան



շրջաններու մէջ՝ ներառեալ Թավրիզը: Իսրայէլի վարչապետ Պենիախն Նեթանիահու յայտնեց, թէ Իրան կրնար արտադրել հիւլէական ռումբ եւ վտանգել Իսրայէլի գոյութիւնը, ուստի որոշում կայացուած էր ծանր հարուած տալ հիւլէական ծրագրին: Ծանրագոյն հարուածը բաժին հասաւ մայրաքաղաքէն շուրջ 250 քիլոմէթր հեռու, Ասֆահան քաղաքին մօտակայքը գտնուող Նաթանգ հիւլէականային, որ կը համարուի եուրա-միւսի հարստացումի գլխաւոր կեդրոններէն մէկը: Սինչեւ ուշ գիշեր հակասական տեղեկութիւններ տարածուեցան հարուածին մասին: Իսրայէլեան կողմը յայտարարեց հիւլէականային

կործանումը, մինչ Իրան խօսեցաւ ստորգետնեայ ճառագայթումի մասին, իսկ Հիւլէական ուժանիւթի միջազգային գործակալութիւնը յայտարարեց, որ Նաթանգի շուրջ տակաւին չէ նկատուած ճառագայթող վտանգաւոր միւթերու արտահոսք, թէեւ Ասֆահանի բնակչութիւնը փոխադրուեցաւ աւելի ապահով վայր:

Ըստ «Ռոյթըրզ»-ի, իսրայէլեան հարուածներուն պատճառով մահացան Իրանի գիծուիրական 20 բարձրաստիճան հրամանատարներ եւ հիւլէական վերնախաւի բազմաթիւ գիտնականներ՝ ներառեալ գիծուած ուժերու հրամանատար զօրավար Մոհամմատ Պաքիրին, յեղափոխական պահակագունդի հրամանատար զօրավար Հըսէյն Սալամին եւ օդուժի պատասխանատու Ալի Հաժիզաւտէն: Իսրայէլեան Մոսատը յայտարարեց, թէ օդային հարուածներէն առաջ յատուկ գործակալներ գետնի վրայ կատարած են գործողութիւններ՝ ճամբան հարթելով հրթիռային հարուածներու իրականացումին: Իսկ բանակը շեշտեց, թէ այս միայն բացումն է եւ արշաւը պիտի ըլլայ երկարատեւ: Իրանի «Ֆարս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ նախնական տուեալներով Թեհրանի ռմբակոծումը պատճառած է քաղաքացիական աւնուազն 78 զոհ եւ 330 վիրաւոր:

Հարուածէն ետք, յեղափոխական պահակագունդի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենէի, նախագահ Մատու Փեզեշքեան, արտաքին գործերու նախարար Ապպաս Արաղճի եւ այլ պատասխանատուներ խոստացան վրէժ լուծել ու պատմական հարուած տալ Իսրայէլին: Որպէս հակադարձութիւն, Թեհրան շուտով յայտարարեց, թէ հակահարուածին առաջին փուլը կատարուած է անօդաչու սարքերով, որոնք հարուածած են իսրայէլեան թիրախներ: Իսրայէլի վարչապետ Պենիախն Նեթանիահու ահազանգեց, թէ «Իսրայէլացիները երկար ժամանակ պէտք է մնան ապաստարաններուն մէջ»: Իրանի անօդաչու սարքերուն ուղղութեամբ արձակուած իսրայէլեան ցամաք-օդ հրթիռներուն բեկորներն ինկան Լիբանանի եւ Սուրիոյ հարաւային շրջաններու վրայ՝ սարսափի մատնելով բնակչութիւնը:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՐԵՒԱՆԷՆ ԵՒ ՊԷՅՐՈՒԹԷՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան դատապարտեց Իրանի դէմ իսրայէլեան օդային լայնածաւալ յարձակումը, որովհետեւ «այդ հարցականի տակ կը ընէ այն փխրուն կայունութիւնը, որ ունինք մեր տարածաշրջանին մէջ: Հետեւաբար, մենք շատ մտահոգ ենք»: Հայաստանի Արտաքին գործերու նախարարութիւնը եւս հաղորդագրութեամբ մը դատապարտեց իսրայէլեան յարձակումը, կոչ ուղղելով անյապաղ դադրեցնելու ռազմական գործողութիւններն ու հաւատարիմ մնալու միջազգային իրաւունքին: Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան եւս յայտնեց, թէ խորապէս մտահոգուած է վերջին իրադարձութիւններով: Իսկ Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան տեղի ունեւածը համարեց ոստմոզութիւն Իրանի տարածքային ամբողջականութեան նկատմամբ, որ բացասական ազդեցութիւն պիտի ունենայ տարածաշրջանին վրայ: «Երեւան որոշ ժամանակ առաջ սկսած էր նախապարտաստուիլ այս յարձակումին եւ քննարկել հնարաւոր բոլոր զարգացումները: Նախապարտաս-



Շարունակութիւնը տեսնել էջ 4

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՏԱՐԱՄԱՆԵՐԶԱՆԱՅԻՆ ՆՊԱՏԱԿ



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան յստակացուց, որ Երեւան մտադրութիւն չունի խզելու յարաբերութիւնները Մոսկուայի հետ կամ վերջ տալու Հայաստանի մէջ ռուսական ուժերու ներկայութեան: «Մեր արտաքին քաղաքականութիւնը հաւասարակշռուած է եւ կը հաւասարակշռուի, այդ մեր ռազմավարութիւնն է», ընդգծեց վարչապետը: Չեփոյ մէջ կատարած յայտարարութիւններով Փաշինեան բարդ որակեց տարածաշրջանային կացութիւնը եւ յիշեցուց, որ բացի ռուսերէն, Հայաստանի մէջ կը գործէ նաեւ Եւրոմիութեան դիտորդական առաքելութիւնը, որ կը հետեւի Ատրաշեմանի հետ սահմանային գօտիի դրութեան ու զարգացումներուն: «Մեր նպատակն է տարածաշրջանի երկիրներուն հետ հաստատել յարատեւ ու կայուն խաղաղութիւն», ըսաւ Փաշինեան: Յիշեցնելով, որ Երեւանն ու Պաքուն համաձայնած են խաղա-

Շարունակութիւնը տեսնել էջ 2


ՄԲ. ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՈՅԵԱՆԻ ՄՐԲԱԴԱՍՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ 19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ



Տաճն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Պատրիարքութիւնը աւետեց, թէ Հայոց ցեղասպանութեան նահատակ, սուրբ Իգնատիոս Մալոյեանի սրբադասումը Վատիկանի մէջ տեղի պիտի ունենայ 19 Յոկտեմբեր 2025-ին: Պատրիարքութիւնը մշեց, թէ նախապատրաստութիւնները սկսած են սրբադասումի արարողութեան, որուն ընկալ պիտի ըլլան զանազան երկիրներէ Վատիկան այցելող հաւատացեալներ:

ՄՆԴՄՆ ԷՕԶԷՐ ՄՆՈՒՆՈՎ ՊՈԼՍԱՀԱՅ ԳՐՈՂ ՄԸ ԿԱՐ...

Գիտեմ, որ շատերու համար խորթ պիտի հնչէ այս թրքահունչ մականունը: Եօզէր... Այնուամենայնիւ, գէթ անունի՛ն մէջ հայ բարբառէն արմատ մը, մասնիկ մը կը փորձեն գտնել...:



«Անդ» արմատով ու «ան» վերջածանցով կազմուած անուն մը կրնա՞նք սեպել արդեօք ԱՆԴՄՆ-ը, մնանդութեամբ «Վարդան»-ի: Չեմ կրնար ճշդել կամ հաստատել: Արդէն, վստահ եմ որ այսպիսի անուն մը ծանցը չէ իմ ըմբերցողներուն ջախջախիչ մեծամասնութեան: Մենք, մեր շուրջ, Անդան անունը կրող ռեւէ մէկը չունինք, չենք ալ ունեցած: Սակայն իրողութիւն է, որ իսթանպուլահայ ժամանակակից գրականութեան սիրելի դէմքերէն մէկն էր բանաստեղծ եւ արձակագիր ԱՆԴՄՆ ԷՕՇԷՐԸ (1927-1994): Այսօր տխրօրէն անդրադարձայ, որ արդէն լման 30 տարի սաեւր անցեր է Անդան Եօզէրի մահէն ասդին: Ան իր աչքերը փակեր էր 30 Նոյեմբեր 1994-ին, առողջական լուրջ ու վտանգալից հարցերու դէմ մաքառելէ ետք...:

(Շարունակութիւնը տեսնել էջ 2)

«ՄԱՍԻՍ» - ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ՀԵՐՈՍՆԵՐՈՒ
ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԼԻՑԸ



110 տարիներ առաջ այս օրերուն, անմահացան Յնչակեան կուսակցութեան կարկառուն դէմքերը, որոնք 1915 թուականի Յունիս 15-ին, թրքական դատարանի որոշումով Պոլսոյ մէջ կախաղան բարձրացան մեղադրուելով երիտօրւորներու պարագլուխներուն եւ հայ ժողովուրդի դահիճներուն դէմ մահափորձ կազմակերպելու մէջ: Այս եղելութիւնը տեղի կ'ունենար երբ արդէն ծերբաւկալուած էին Պոլսոյ հայ մտաւորականները, իսկ զաւառներուն մէջ ծայր առած էին հայութեան տեղահանութիւնն ու կոտորածները: Այս իրադարձութիւնները շողկապուած են իրենց տխուր վախճանով, սակայն եւ կ'արժեւորուին հայ ժողովուրդի վերածնունդով ու գոյատեւմամբ:

Այդ օրէն ասդին, Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութիւնը ամեն տարի նշելով Քսաններուն հերոսական նահատակութեան տարելիցը, վեր կ'առնէ անոնց վերջին պատգամները՝ արտասանուած կախաղանին վրայէն: «Դուք մեզ քսաններս կը կախէք, սակայն քսան հազարներ պիտի զան մեր գործը շարունակելու», «Վաղը արեւելքի հորիզոնին պիտի ողջունենք Յայաստանի ծնունդը», «Այս թաշկինակը տուէք մօրս ու ըսէք, որ ան արցունք չէ տեսած», այս խօսքերով Քսանները անմահացան Յնչակեան կուսակցութեան պատմութեան մէջ ու իրարայաջորդ սերունդները կը շարունակեն ուխտել՝ քալելու անոնց գծած ուղիէն ու հետեւելու անոնց տեսլականին ու նպատակներուն:

ՍԴՀԿ իր հիմնադրութեան առաջին օրէն սկսեալ մարտնչած է հայ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան համար: Կուսակցութեան առաջնորդած Սասունի ու Ձէթունի ապստամբութիւնները, Գում Քափուի ու Պապ Ալիի ցոյցերը կը ձգտէին աշխարհի ուշադրութիւնը հրաւիրելու Օսմանեան պետութեան վարած կեղեքումի քաղաքականութեան վրայ՝ ձգտելով վերացնելու հայութեան դէմ գործադրուող տնտեսական ճնշումը ու հասնելու նուազագոյնը ինքնավարութեան, որ

պէտք էր դառնար նախաքայլը դէպի անկախ պետականութիւն: Մէկուկէս միլիոն նահատակներու արեան գնով ու Սարդա-րապատի հերոսական ճակատամարտով հայ ժողովուրդը վեց հարիւր տարուայ ստրկութենէ ետք վերականգնեց իր պետականութիւնը ու մասամբ իրականացաւ Քսաններուն երազը ու աւելիով իմաստաւորուեցաւ անոնց կեանքի ուղին:

Ներկայիս, մեր բոլորիս պարտականութիւնն է պահել ու պահպանել փոքրիկ մեր Յայրենիքը, որ լոյս կը սփռէ Մայր Յայրենիքի մէջ ու աշխարհի տարբեր անկիւններ ապաստան գտած իր ժողովուրդի զաւակներուն: Ինչպէս անցեալին, մեր ժամանակներուն եւս, Յայաստան կը մնայ շրջապատուած նոյն թշնամիներով, որոնց համար մեր անկախ պետականութիւնը խոչընդոտ է իրենց փանթուրանական ծրագրերու իրականացման ճանապարհին: Տակաւին վերջերս Թուրքիոյ նախագահը Յայաստանի վրայով թռչելու պահուն բացէիքաց կը խօսէր այդ մասին: Մենք պէտք է ամէն ինչ ընենք, որպէսզի երտողաններու երազը մնայ այդպիսին՝ պարզ երազ:

Յայաստանի Յանրապետութիւնը այս օրերուն կը դիմագրաւէ բազում դժուարութիւններ, սակայն ի վիճակի է յաղթահարելու իր առջեւ ծառացած բոլոր մարտահրաւերները՝ կառուցելով ուժեղ տնտեսութիւն, արդիական բանակ ու վայելելով բարեկամ երկիրներու աջակցութիւնն ու զօրակցութիւնը: Այս բոլոր աշխատանքները աւելի հեշտ կը դառնան ներքին համերաշխութեամբ ու պետականութեան պահպանման գաղափարին շուրջ համախմբումով:

ՍԴՀԿ, հետեւելով իր Քսան հերոսներու պատգամին, կը շարունակէ զօրավիճ կանգնիլ Յայաստանի ժողովուրդի ընտրութեան, հեռու մնալով բոլոր տեսակի արկածախնդրութիւններէ, որոնք կը ջլատեն մեր ներքին դիմադրողականութիւնը՝ յագուրդ տալով մեր թշնամիներուն: ՍԴՀԿ իր պատմութեան ամբողջ ընթացքին մնացած է հաւատարիմ իր դաւանած գաղափարախօսութեան, միշտ մնալով ճիշդ ուղիի վրայ, քանի որ մենք Յայրենիքը կը դասենք ամեն բանէ վեր: Յարգանք Քսան հերոսներու յիշատակին:

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ 41

Ի	Ն	Տ	Յ	Ա	Յ	Յ	Ս	Տ	Ա	Կ	Ա	Կ	Ա	Տ	Ա	Պ	Ն	Հ	Ծ
Դ	Պ	Ք	Կ	Ր	Ա	Ն	Ի	Տ	Ն	Ն	Մ	Ա	Դ	Ն	Ա	Կ	Ա	Ր	Ա
Ն	Ա	Չ	Ի	Յ	Ք	Յ	Ա	Մ	Հ	Ա	Ի	Ա	Ս	Ի	Ք	Ա	Կ	Ն	
Ա	Ս	Ն	Ր	Ծ	Ճ	Ա	Շ	Ա	Կ	Ր	Խ	Ե	Ն	Ռ	Ե	Կ	Հ	Ր	Ի
Մ	Տ	Ա	Մ	Ի	Ր	Ը	Մ	Ա	Ն	Ե	Կ	Ա	Ի	Ն	Ա	Ն	Ա	Կ	Ծ
Ր	Տ	Ճ	Ա	Ծ	Մ	Ա	Ն	Ր	Ա	Կ	Ա	Չ	Մ	Ղ	Ն	Ա	Ի	Ն	Ո
Ա	Ն	Ա	Ր	Ո	Ր	Ո	Կ	Տ	Ր	Ն	Ր	Ծ	Ե	Ա	Է	Շ	Ա	Ո	Դ
Մ	Ի	Ճ	Մ	Կ	Ի	Տ	Հ	Ա	Ե	Ը	Ծ	Յ	Ր	Պ	Ր	Ն	Ս	Յ	Ն
Ա	Ո	Ի	Ի	Ն	Մ	Ա	Ո	Ճ	Մ	Լ	Ի	Մ	Հ	Ա	Ա	Տ	Տ	Ա	Ը
Ն	Ն	Ճ	Ն	Ի	Ր	Մ	Ս	Ա	Ռ	Ա	Ք	Ա	Ր	Յ	Կ	Տ	Ի	Ճ	Կ
Դ	Ա	Պ	Ա	Ա	Յ	Ր	Ա	Կ	Ա	Բ	Հ	Ս	Ա	Կ	Ն	Ա	Ա	Կ	Ր
Ո	Ա	Ի	Ի	Կ	Ր	Ա	Ն	Ա	Մ	Ր	Ա	Ն	Հ	Ն	Ա	Շ	Ղ	Ր	Ե
Ր	Ո	Ր	Ե	Յ	Ա	Տ	Ք	Տ	Ա	Ի	Դ	Ա	Ա	Կ	Ա	Չ	Ր	Ե	Հ
Ր	Ճ	Ի	Ր	Ա	Ն	Տ	Ն	Ա	Յ	Ո	Ը	Կ	Ն	Կ	Ր	Տ	Ի	Լ	Կ
Ը	Ր	Ա	Տ	Ր	Ա	Ճ	Ա	Ը	Ի	Ն	Ն	Ի	Ա	Կ	Ի	Յ	Ա	Ճ	Ի
Ս	Ն	Յ	Ա	Մ	Ա	Յ	Ր	Գ	Տ	Ր	Ն	Ի	Ր	Ա	Մ	Ր	Ա	Մ	Ն
Ե	Ի	Ք	Ի	Ն	Խ	Ա	Ն	Ա	Ի	Տ	Ո	Մ	Ա	Ս	Ն	Ա	Կ	Ի	Ա
Լ	Կ	Ր	Ե	Կ	Ն	Ը	Ն	Տ	Յ	Ր	Կ	Ա	Ն	Ի	Ո	Դ	Ն	Ը	Տ
Ի	Ր	Յ	Ո	Ր	Ա	Ի	Ն	Ա	Ճ	Ե	Ն	Ճ	Ե	Ր	Ի	Ռ	Յ	Ն	
Ք	Կ	Կ	Ի	Ր	Ք	Ը	Յ	Յ	Ա	Ս	Մ	Ի	Կ	Ի	Տ	Ր	Ա	Մ	Ը

ԱՅԵՐ	ԸՆԴՈՒՆԱԿ	ԿԵՈՆԵԽ	ՅՈՍԱՆՔ
ԱՆԴԱՄ	ԸՆԿԵՐ (2)	ԿԻՐՔ	ՅՐԱՅԱՆ
ԱՆԴՈՐՐ	ԸՆՏԱՆԻ	ԿՈԾԻԾ	ՅՐԱՏԱՊ
ԱՆՀԱՄԱՐ	ԸՆՏԱՆԻՔ	ԿՐԱՆԻՏ	ՃԱԿԱՏ
ԱՆՀԱՐ	ԸՆՏԵԼ	ԿՐԿԻՆ	ՃԱԿԱՏԱԳԻՐ
ԱՆՈՒՆ	ԸՆՏԻՐ	ԿՐԿԼՈՑ	ՃԱՃԱՆՉ
ԱՐԱԿԱՆ	ԸՆՏՐԱՆԻ		ՃԱՅԻԿ
ԱՐՄԱՏ	ԸՍԵԼԻՔ	ՀԱՄԱԿԱՐԾԻՔ	ՃԱՇԱԿ
ԱՐՈՅՐ		ՀԱԻԱՍՏԻ	ՃԱՇԱԿԱՒՈՐ
ԱՔԱՅԻ	ԿԱՆԱՆԻ	ՀԱԻԱՍՏԻՔ	ՃԱՐՏԱՐ
	ԿԱՐԾԻՔ	ՀԵՐԿ	ՃԵՆՃԵՐ
ԸՆԴՈԾԻՆ	ԿԵՂԱԿԱՐԾ	ՀԵՐՉԱԿ	ՃԻՐԱՆ

ԽԱՊԻՆ ՕՐԵՆՔԸ.

- Բառերը կրնան կարդացուիլ տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի:
- Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ:
- Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով:

Պահուած բառը (7 տառով)՝ ՀԱՅԿԵՐՈՅՈ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ ԹԻՒ 40-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ԿՈՐԵՊԵՂ

Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

ԿԵԱՆՔԻ ՀԵՔԻԱԹԸ

Եւ ի՞նչ իրաւ է իրա՞ւ
Աշխարհ մէկուն չի մնար,
Երգես երգես «անուշ եար»
Եարն ալ եարին չի մնար...

Գուցէ կեանքը գիրք մը ըլլար
Հեքիաթին պէս «կար ու չկար»
Գուցէ բառ բառ գրուած ըլլար
Մի օր մին կար՝ օր մ'ալ չկար...

Գուցէ օրը մեր ծննդեան
Մաշի հինցած թուղթի վրայ,
Շիրմաքարը կ'ըսէ սակայն
Աշխարհ երբ էր մտանք-ելանք...

Շիրմաքարը բայց չի գիտեր
Ինչպէս լալով աշխարհ մտանք,
Ոչ ալ գիտէ երբ դուրս եկանք
Ուրիշներու լացով ելանք...

Չեմ տրտնջար...այս է աշխարհ,
Օրեր կու գան, օրեր կ'երթան,
Թիւ մէկ օրին էր Մարդ ծնանք՝
Վերջին օրն ալ գէթ ՄԱՐԴ երթանք...

15 Հոկտեմբեր 2021

ԹԱՂԻՍ ԵՍԱՅԵԱՆ

ԽԱՉԲԱՌ 40

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1) Ժագ Ս. Յակոբեանի երկերէն
2) Քարայատակ
3) Այբուբենէն (հակ.) – Ազդը – Ցաւի ճիշ
4) Փականք – Ածականակերտ մասնիկ – Ծայրատ՝ կողով
5) Ախորժաբեր բոյս - ճորտին յանձնուած հողաշերտ
6) Ձայն, մրմունջ – Սեւ ծովու նաւահանգիստ (հակ.)
7) Գիշերային թռչուն – Կէս՝ ունկնդրել – Ափրիկեան գետի մը տեղական անունը (հակ.)
8) Յարաբերական դերանուն – Արական օտար անուն - Եգիպտական դից
9) Շրջ.՝ մշտադալար ծառատեսակ
10) Տարափոխիկ հիւանդութիւն մը

ՈՐՂԱՅԱՅԵԱՑ

1) Որոշ մասնագիտութեան տէր բժիշկ
2) Հեծեալ
3) Ցուցական ածական – Արբոն – Կրկնուած բաղաձայններ
4) Լարաւոր նուագարան – Եղանակաւորիչ մակբայ – Կմիքի դրոշմ (հակ.)
5) 2021-ին մահացած լիբանանցի երգահան – Ջուրով մաքրէ
6) Յանդիմանութիւն – Արական անուն
7) Մշակուած հող – Ցուցական ածական – Կաթնահամ հատիկներով ցորենի հասկ (հակ.)
8) Իրերայաջորդ գիրեր – Մաքրութեան խրճակ – Էական բայ
9) Մարդքի քաղաքներէն
10) Խթում, նաւակատիք

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 39-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1		Մ	Ա	Ս	Ն	Ա	Տ	Ո	Ի	Փ
2	Ծ		Լ	Ի	Ա	Չ	Օ	Ր		Ա
3	Ա	Ճ		Կ	Թ	Ա	Ն		Բ	Փ
4	Ծ	Ա	Կ		Ա	Տ		Ս	Ե	Կ
5	Կ	Ր	Կ	Ի	Ն		Ք	Ի	Լ	Ա
6	Ա	Տ	Ո	Մ		Կ	Ա	Ր	Ի	Ն
7	Ն	Ա	Ի		Շ	Ա		Տ	Ա	Կ
8	Ո	Ր		Խ	Ո	Կ	Ա		Ր	Ա
9	Ի		Տ	Ո	Ի	Ա	Յ	Ր		Տ
10	Ն	Ե	Ր	Շ	Ն	Չ	Ո	Ի	Մ	



ՀՈՎԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ
ՀԱԼԷՊԻ ԵՐԵՔ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԵՐՈՒՆ

կազմակերպութեամբ
Ս.Դ.Հ.Կ.

ՏԽՐՈՒՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

20 կախաղաններու նահատակութեան
110 ամեակի ոգեկոչում

Բանախօս՝
Ընկ. ՆԱԶԱՐԷԹ ԾԵՐԷՃԵԱՆ

Արարատ Օրաթերթի Տնօրէն

Կիրակի, 15 Յունիս 2025,
Երեկոյեան ժամը 7:00-ին
Ս. Երրորդութեան Աղաճանեան սրահէն ներս:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՀԱՅ ԱԶԳԻ ԱՆՄԱՀ
ՔՍԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ՌԱՀՎԻՐԱՆԵՐՈՒ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 110-ԱՄԵԱԿԻՆ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ՝
ԳԵՐՇ. ՏԷՐ. ՇԱՀԷ ԱՐՔ. ՓԱՆՈՍԵԱՆԻ
Բարեշան Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի

Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի,
22 Յունիս 2025-ի առաւօտեան ժամը 10:30-ին
Ռըմէյլի Ս.Յարութիւն եկեղեցւոյ մէջ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԱՂԹԱՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ.
ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱԳԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ՕԾՄԱՆ
30-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 15 Յունիս 2025-ի առաւօտեան ժամը 9:30-ին,
Մայրականքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին
մէջ պիտի մատուցուի եպիսկոպոսական Սուրբ եւ Ամմահ
Պատարագ եւ Հայրապետին զահակալութեան 30-
ամեակին առիթով պիտի կատարուի ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԱՂԹԱՆՔ:

Նախագահութեամբ՝
Ն.Ս.Օ.Տ.Տ.
ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Պատարագիչ եւ քարոզիչ՝
Գերշ. Տ. ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
(«Կիլիկիա» մատենադարանի տեսուչ)

Սուրբ Պատարագէն ետք Վեհափառ Հայրապետը վեհա-
րանի դահլիճին մէջ պիտի ընդունի շնորհաւորութիւններ:

ԴԻԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ



Կազմակերպութեամբ՝
Ս.Դ.Հ.Կ. Տիրունի Ուս. Երիտ. Միութեան Վարչութեան

ՍՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Նուիրում՝

20 ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ
110-րդ ամեակին

Տեղի կ'ունենայ Կիրակի, 15 Յունիս 2025-ի երեկոյեան, ժամը
6-ին, Նոր Հաճնոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ շրջափակին մէջ:

 @DekhrouniSYA

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ԱՅՍՕՐ

14 Յունիս 2025: Տարուան 165-րդ օրն է:
2025-ի աւարտին կը մնայ 200 օր:

Դէպքեր-տօներ

1777 – Ամերիկայի դրօշի հաստատումը: Միացեալ Նահանգներու զօնկրեւը պաշտօնապէս ընդունեց մոր դրօշակը՝ կարմիր, սպիտակ երիզներով եւ 13 աստղով, որ կը խորհրդանշէր այն ժամանակուան 13 գաղութները:

1869 – Պաքուի Հռիփսիմեան օրիորդաց դպրոցի հիմնադրութիւնը, 19-րդ դարու երկրորդ կէսին, հայ կա- նանց կրթութեան զարթօնքի շրջանին, 14 Յունիս 1869- ին Պաքուի մէջ կը հիմնուի Հռիփսիմեան օրիորդաց դպրոցը:

1900 – Հաւայեան կղզիներու միացումը Ամերիկային: Այսպիսով, Հաւայացի դարձաւ ԱՄՆ-ի 50-րդ նահանգը՝ Ամերիկայի մայրցամաքէն դուրս գտնուող կարեւորագոյն ռազմավարական եւ մշակութային կեդրոններէն մին:

1967 – Հիմնաստանի առաջին քրածնային ռումբի փորձարկումը:

1985 – Շենկենեան համաձայնութեան ստորագրումը: Լիբանոնի Երեւանի գիւղին մէջ՝ Պելճիքան, Ֆրան- սան, Գերմանիան, Հոլանտան եւ Լիբանոնի ստո- րագրեցին պատմական համաձայնագիր մը, որուն նպատակն էր ապահովել ազատ տեղաշարժ անդամ երկիրներու սահմաններէն ներս:

Արեւմտեան Տուրքիան Համաշխարհային օր:
Միացեալ Նահանգներու մէջ Դրօշի օր:
Եսթոնիոյ եւ Լատվիոյ մէջ՝ Համայնավար վարչակարգի գոհերու յիշատակի օր:

Ծնունդներ

1712 - Սայաթ-Նովա (Յարութիւն (Արութիւն) Սայաթեան) (1712–1795), աշուղ, բանաստեղծ ու երաժիշտ, եղած է ուշ միջնադարեան աշուղական արեւել- եան դպրոցի հիմնադիրներէն:

1969 - Շքեֆի Կրաֆ, թեմիսի պատմութեան առասպե- լական կինը, միակ թեմիսիստուիկն է, որ մէկ տարուայ մէջ յաղթած է «Մեծ Սաղաւարտ»ի չորս մրցաշարքերն ու ողիմպիական ոսկի՝ 1988-ին:

1928 - Չէ Կեւարա (Էռնեսթօ Կեւարա, 1928–1967) արժանթինցի մարքսիստ յեղափոխական մըն էր, որ դարձաւ Քու- պայական յեղափոխութեան առաջնային ղեկավարներէն: Բժիշկ-մտաւորական ըլլալով համդերձ իր կեանքը նուիրեց զինեալ պայքարի՝ ընդդէմ կայսերա- պաշտութեան եւ ընկերային անհաւասարութեան:


1946 – Տանըլտ Թարանփ, ամերիկացի գործարար եւ ամերիկայի 2017-2021-ի եւ այժմու նախագահը:

Մահեր

1883 - Էտուարտ Ֆիցցերալտ (1809– 1883), անգլիացի բանաստեղծ, որ կը յիշուի իբրեւ անգլերէնով «Օմար Խայամի Ռուպայաթներուն» ամենաճանցնուած թարգմանիչը: Իր ստեղծած բանաստեղ- ծական վերամշակումները կամուրջ դար- ծան արեւելեան փիլիսոփայութեան եւ գրականութեան միջեւ:

1968 - Ռուբէն Դարբինեան (Արտաշէս Ստեփանի Չիլինկարեան, 1883-1968), հասարակական-քաղաքական գործիչ:

2003 - Կրեկորի Փեկ (1916–2003), ամերիկացի նշանաւոր դերասան, որ ընդ- միշտ յիշատակուեցաւ իր ազնիւ կերպար- ներով եւ բարոյական օրինակով:



ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՐԵՒԱՆԷՆ ԵՒ ՊԵՅՐՈՒԹԷՆ

Շարունակում էջ 1-էն

տական աշխատանքներ կատարած ենք եւ ըստ զարգացում- ներուն մենք ունինք ծրագրեր, որոնց համապատասխան ալ պիտի շարժինք», հաւաստիացուց Արմէն Գրիգորեան: Ան շեշտեց, որ տեղի ունեցածը ոչ միայն Իրանի եւ Միջին Արեւելքի համար սպառնալիք է, այլեւ խնդիր է Հայաստանի համար: Թեհրանի մէջ Հայաստանի դեսպանութիւնը Իրան գտնուող Հայաստանի քաղաքացիներուն յորդորեց պահպանել զգո- մութիւն, հետեւիլ պաշտօնական ցուցմունքներուն եւ արտակարգ իրավիճակի պարագային կապ հաստատել դես- պանատան հետ: Իրանի դէմ գործուած օդային յարձակումին պատճառով, Մոսկուայէն, Սինսթէն, Քազանէն եւ այլ շրջաններէ Տուպայ ուղղուող 10 օդանաւ վայրէջք կատարած է Պաքուի մէջ: Այդ օդանաւներուն մէջ եղած են հայկական ծագում ունեցող եւ ազգանուն ունեցող ուղեւորներ: Նկատի առնելով Պաքուի հայատեաց քաղաքականութիւնը եւ հայերու նկատմամբ ատրպէճանական դաժան վերաբերմունքը, Ռուսիոյ հայերու միութիւնը դիմեց Ռուսիոյ Արտաքին գործերու նախա- րարութեան, խնդրելով վերահսկողութեան տակ առնել դրու- թիւնը եւ կանխել օդանաւներուն մէջ գտնուող հայազգի ուղեւորներուն նկատմամբ հնարաւոր ապօրինութիւնները: Միւթիւնը դիմեց նաեւ Երեւանին՝ կոչ ուղղելով կատարելու ամէն ինչ՝ ապահովելու Պաքուի մէջ յայտնուած հայերուն անվտանգութիւնը:

Իրանի դէմ իսրայելեան հարուածներուն լոյսին տակ, Լիբա- նանի Հանրապետութեան նախագահ ժողէֆ Աւու ընդհատեց Իտալիա եւ Վատիկան իր այցելութիւնն ու վերադարձաւ Պէյրութ՝ հետեւելու տարածաշրջանային վտանգաւոր զարգա- ցումներուն: Ամրո խօսքով, հարուածը միայն Իրանի դէմ չէ, այլ՝ ամբողջ տարածաշրջանին: Աւու նախապէս Վատիկանի մէջ տեսակցած էր Հռոմի

պապին հետ եւ յայտարարած, որ լսած է Լիբանանին աջակ- ցելու հարցով եկեղեցւոյ յանձնառութեան մասին: Վարչապետ Նաուաֆ Սալամ նախարարներու հետ արծարծեց նորագոյն զարգացումներն ու պահանջեց դիմել հնարաւոր բոլոր միջոց- ներուն՝ վերականգնելու համար կայունութիւնը: Վարչապետը ահազանգեց, որ տեղի ունեցածը միջազգային օրէնքի բացա- յայտ խախտում է:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը միատ մը յատկացուց քննարկելու իսրայելեան յարձակումը: Թեհրան ՄԱԿ-ին տեղե- կացուց, թէ այս հարուածով Իսրայէլ հատած է բոլոր կարմիր գիծերը: Միացեալ Նահանգներ յայտարարեց, թէ տեղեակ էր յարձակումին մասին, զայն կը համարէ Իսրայէլի ինքնապաշտ- պանութեան իրաւունքը, սակայն չէ մասնակցած գործողու-

թեան: Նախագահ Տոնըլտ Թարանփ շեշտեց, որ Թեհրան վերջին շրջանին կորսնցուցած էր համաձայնութեան յանգելու բազ- մաթիւ առիթներ, մաղթելով որ հարուածէն ետք վերստին կ'ըլլայ համաձայնելու հնարաւորութիւն: Սեւտական Արաբիա, Քաթար, Թուրքիա, Արաբական Միացեալ Եմիրութիւններ, Յոր- դանան ու շրջանային այլ ուժեր մտահոգութիւն յայտնեցին տեղի ունեցածին առնչութեամբ, կոչ ուղղելով չվտանգելու Միջին Արեւելքի վիճակը եւ հիւլէական հարցը լուծելու համաձայնութեամբ: Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն շեշտեց, որ Իսրայէլ ունի ինքնապաշտպանութեան իրաւունք: Իսկ Եւրոմիութիւնը կոչ ուղղեց ինքնազապումի՝ զերծ մնալով յաւելեալ մագլցումէ:

ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՕՐ



Պէյրութ (արեւոտ)
Ցերեկը 27/24՝ գիշերը՝ 67% տամուկ

Երեւան (ընդհ. արեւոտ)
Ցերեկը 34/19՝ գիշերը՝ 25% տամուկ

Հալէպ (արեւոտ)
Ցերեկը 37/22՝ գիշերը՝ 27% տամուկ

Դամասկոս (արեւոտ)
Ցերեկը 37/17՝ գիշերը՝ 15% տամուկ

Տուպայ (արեւոտ)
Ցերեկը 39/31՝ գիշերը՝ 41% տամուկ

Լոս Անճելըս (արեւոտ)
Ցերեկը 26/17՝ գիշերը՝ 56% տամուկ

Սիտնի – վաղը (ընդհ. արեւոտ)
Ցերեկը 17/7՝ գիշերը՝ 58% տամուկ

Մոնթրէլիտօ – վաղը (ամպոտ)
Ցերեկը 13/8՝ գիշերը՝ 87% տամուկ

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradorater@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية
تصدر عن شركة ماسيسر للمباعة والنشر (ش.م.م.)